ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սուսաննա Կարախանյան, PhD
ՈԱԱԿ, Քաղաքականության մշակում
INQAAHE-ի կառավարման խորհրդի անդամ
Համաշխարհային բանկի փորձագետ

ՈԱԱԿ-ի ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎ
Հոկտեմբերի 8 -9, 2012

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Համակարգի վերլուծության նպատակները
- Կիրառված մեթոդները
- Մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման առկա վիճակը
- Որակի արտաքին ապահովման ազդեցությունը մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման համակարգի վրա
- Ուսուցման և ուսումնառության առկա խնդիրները
- Շնորհակալության խոսք

ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- Բացահայտել ՀՀ մասնագիտական կրթական համակարգի որակի ներքին ապահովման առկա վիճակը,
- արձագանքել ՀՀ կառավարության պահանջին՝ ուսումնասիրելով մասնագիտական կրթության որակի և որակի ապահովման առկա վիճակը՝ որպես համակարգի բարեփոխումների մաս,
- արձագանքել Բարձրագույն կրթության եվրոպական տարածքի որակի ապահովման ուղենիշներին և չափորոշիչներին (ԵՈՒՉ 2.8),
- տրամադրել խորհրդատվություն կրթական գործընթացների պլանավորման և կրթության կառավարման ուղղությամբ:

ԿԻՐԱՌՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐԸ

- մասնագիտական ուսումնական հաստատությունների վերաբերյալ ՈԱԱԿ-ի ստեղծած բազայի տվյալների վերլուծություն, ինչպես նաև այդ բազայում առկա համապատասխան փաստաթղթերի ուսումնասիրություններ,
- վերջին երկու տարիների ընթացքում իրականացված և՛ ինստիտուցիոնալ, և՛ ծրագրային հավատարմագրման 15 փորձարկում, ինչպես նաև դրանց արդյունքում բարելավումներին ուղղված մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից ձեռնարկված քայլեր,
- մասնագիտական ուսումնական հաստատություններում որակի ապահովման համակարգի և, մասնավորապես, ուսուցման և ուսումնառության վերաբերյալ հարցում,

ԿԻՐԱՌՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐԸ

- հաստատությունների դասախոսական կազմի հետ ֆոկուս խմբերի անցկացում ուսումնասիրությունների և հարցումների տվյալների հավաստիությունը պարզելու, ինչպես նաև ուսուցման և ուսումնառության իրավիճակի վերաբերյալ ավելի խորը պատկերացում կազմելու նպատակով,
- ՀԲ-ի և ՏԵՄՊՈՒՍ-ի ծրագրերի շրջանակներում մշակումներում և համակարգի փորձարկումներում ներգրավված միջազգային փորձագետների արձագանքը,
- Ուսանողության ձայնի նախաձեռնությամբ 2011-2012թթ. ուսանողների շրջանում անցկացված հարցումները:

Մասնագիտական կրթության համակարգ

- Բուհ-երի քանակ
  - Պետական – 22
  - Ոչ-պետական – 40
  - Միջպետական – 4

  Ընդամենը՝ 123700 ուսանող

- Քոլեջներ – 116

  Ընդամենը՝ 36647 ուսանող

ԸՆՏՐԱՆՔԸ



- Ոչ պետական ՄՈՒՀ
- Միջպետական ՄՈՒՀ
- Պետական ՄՈՒՀ
- Միջին ՄՈՒՀ

Մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման առկա վիճակը

ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ



ՄՈՒՀԵՐՈՒՄ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ



ՄՈՒՀԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՆԵՐՈՒԺԸ



ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ



ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆԸ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՓԱՍՏԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄ

- **Եզրակացություն:** Թիրախային հաստատություններից գրեթե ոչ մեկը չուներ փորձ աշխատելու սահմանված առաքելության և հաստատված ռազմավարական ծրագրի հետ:

- **Խորհրդատվություն:** Իրականացնել մուհերի պրոֆեսորադասախոսական և վարչական աշխատակազմի վերապատրաստումներ կառավարման մոտեցումների օպտիմալ կիրառման նպատակով:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ



ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

- **Եզրակացություն:** Թիրախային գրեթե ոչ մի մուտ չկարողացավ ներկայացնել քաղաքականության անհրաժեշտ փաստաթղթեր կամ անհրաժեշտ տվյալներ՝ հիմնավորելու վերջին հինգ տարիների ընթացքում կառավարման ուղղությամբ տարվող գործողությունները:
- **Խորհրդատվություն:** Հաշվի առնել ինստիտուցիոնալ տեղեկատվության կառավարման համակարգի ստեղծումն ու գործարկումը՝ նպաստելու հավաստի տվյալների հիման վրա որոշումների կայացման գործընթացին:

ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ



ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

- **Եզրակացություն:** Մուտքերը դեռևս պետք է հաղթահարեն բազմաթիվ մարտահրավերներ որակի ապահովման գործընթացներում շահակիցների (պրոֆեսորադասախոսական կազմ, գործատուներ և շրջանավարտներ) ներգրավվածությունը ապահովելու համար :
- **Խորհրդատվություն**: ՈԱ գործընթացներում շահակիցների ակտիվ ներգրավվածությունը ապահովելու համար մշակել որակի ապահովման գործող և արդյունավետ մեխանիզմներ և գործիքներ :

ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԴԵՐԸ ՄՈՒՀԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

- **Եզրակացություն:** Անհրաժեշտություն կա մշակել բարձրագույն կրթության կառավարման, մասնավորապես՝ որակի ապահովման նոր մեթոդներ և ձևեր:
- **Խորհրդատվություն:** Անհրաժեշտ է հաշվի առնել որակի ապահովումը՝ որպես մուհի կառավարման գլխավոր շարժիչ ուժերից մեկը:

ՄՇԱԿՈՒՅԹ ՎԵՐԱՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ



Որակի արտաքին ապահովման ազդեցությունը մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման համակարգի վրա

ՈԱԱԿ-Ի ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

- Կազմակերպվել են շարունակական աշխատաժողովներ տարբեր շահակիցների հետ,
- իրականացվել են վերապատրաստումներ որակի ներքին և արտաքին ապահովման համակարգերի կառավարման ուղղությամբ,
- իրականացվել են վերապատրաստումներ մուտերում նախատեսվող փոփոխությունների վերաբերյալ,
- տրամադրվել է խորհրդատվություն,
- մշակվել են որակի արտաքին ապահովման գործիքներ՝ ներգրավելով շահակիցներին՝
  - քննարկումներ ՈԱ չափանիշների, չափորոշիչների և ընթացակարգերի վերաբերյալ,
  - արձագանք ստանալու նպատակով շրջանառության մեջ են դրվել մշակված փաստաթղթերը,
- փորձարկվել են մշակված գործիքները:

ՈԱԱԿ-Ի ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

- **Եզրակացություն:** ՈԱԱԿ-ի որակի ապահովման մոտեցումները իրենց դրական ազդեցությունն ունեցան մուհերում որակի ապահովման համակարգի ներդրման վրա:
- **Խորհրդատվություն:** Աջակցել մուհերին ներդնելու որակի ապահովման համակարգեր և իրականացնել մուհի կառավարման մոտեցումների փոփոխություններ՝ այդպիսով անցում կատարելով որակի վերահսկումից որակի բարելավմանը և նպաստելով որակի մշակույթի ստեղծմանը:

ՈԱԱԿ-ի ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ



ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

- **Եզրակացություն:** Հաստատությունները անցումային շրջանի կարիք ունեն:
- **Խորհրդատվություն:** Սահմանել այն ժամանակահատվածը, որի ընթացքում հաստատությունները կկարողանան բարելավել իրենց կարողությունները, վերանայել որակի կառավարման և բարելավման մոտեցումները՝ այդպիսով պատրաստ լինելով հավատարմագրման:

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԹԵ՞ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

- **Եզրակացություն:** Զուտ վերահսկողություն իրականացնելը կարող է զրկել հաստատություններին օգտվելու զարգացման հնարավորություններից, հետևաբար կձախողվեն գիտելիքահեն հասարակություն ստեղծելու գործընթացում նրանց աջակցության փորձերը :
- **Խորհրդատվություն**: Ազատվելով նախկինում ունեցած վերահսկողության փորձից՝ անցնել բարելավումներին ուղղված որակի ապահովման մոտեցումներին:

Ուսուցման և ուսումնառության առկա խնդիրները

ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

- **Եզրակացություն:** Փորձարկումներում ներգրավված մուհերը միաձայնորեն փաստեցին, որ կաղապարված են ՀՀ կառավարության կողմից ներկայացված կրթական չափորոշիչներով:
- **Խորհրդատվություն:** Անցումը ուսումնառության վերջնարդյունքների վրա հիմնված ուսուցմանը և ուսումնառությանը թույլ կտա մուհերին առավել ինքնավար գործունեություն ծավալել:

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ

- **Եզրակացություն:** Դասախոսական կազմը դեռևս կիրառում է ավանդական մոտեցումներ, որոնք իրականում ուսանողներին օտարացնում են իրական դասավանդման գործընթացից:
- **Խորհրդատվություն:** Վերանայել ուսուցման և ուսումնառության մոտեցումները, հիմնվել ուսումնառության վերջնարդյունքների վրա, և կապ ստեղծել վերջիններիս և ուսուցման ու ուսումնառության մեթոդների միջև:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- **Եզրակացություն:** Ուսանողի գնահատումը մյուս ցավոտ խնդիրն է: Գրեթե ոչ մի ՄՈՒՀ չունի ամբողջական և ճիշտ գնահատման համակարգ, և շատերը չեն սահմանել այն տրամաբանությունը, որի հիման վրա մշակվել է գնահատման համակարգը:

- **Խորհրդատվություն:** Վերանայել ուսանողների գնահատման տարբեր մոտեցումները՝ հիմք ընդունելով ուսումնառության վերջնարդյունքները:

ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԵՎ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

- **Եզրակացություն:** Կրեդիտների փոխանցման և կուտակման համակարգը սխալ է մեկնաբանվում և, հետևաբար, ճիշտ չէ ընկալվում ուսանողների և դասախոսների կողմից:
- **Խորհրդատվություն**: Վերանայել կրեդիտային համակարգի մոտեցումները՝ հաշվի առնելով դրա երկու հիմնական գործառույթները՝ փոխանցում և կուտակում, և մշակել համապատասխան իրավական շրջանակ դրա իրականացումը խթանելու նպատակով:

ԴՐԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ ☺

Կրթության մասին հայտնի ասացվածք՝

«Եթե այլ ոլորտներում անիվը աշխատում է որոշակի խնդիրներով, ապա կրթության ոլորտում անիվը միշտ կանգնած է»:

ՀՀ մասնագիտական կրթական ոլորտի անիվը արդեն շարժվել է ☺

ԴՐԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ ☺

- մուհերի կողմից միտում է նկատվում բարելավվելու իրենց կառավարման մոտեցումները և հասնելու լավագույն արդյունքների,
- մեծ մասամբ հաստատությունները վերանայում են ուսուցման և ուսմնառության գործընթացների կառավարման իրենց մոտեցումները,
- կա միտում՝ նախ խորը պատկերացում կազմել իրավիճակի վերաբերյալ, այնուհետև նախաձեռնել փոփոխություններ,
- մուհերի կառավարմանը ինքնաքննադատական մոտեցում է ցուցաբերվում:

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ

- *«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը* (ՈԱԱԿ) իր խորին շնորհակալությունն է հայտնում ՀՀ-ում գործող մասնագիտական ուսումնական հաստատություններին, որոնք իրենց նեդրումն ունեցան համակարգի վերլուծություն կատարելու մեջ ներկայացնելով իրենց արձագանքը ՈԱԱԿ-ի մշակումներին, ինչպես նաև ակտիվ մասնակցություն ունենալով մուհերում որակի ներքին ապահովման առկա վիճակի վերաբերյալ կատարված հարցումներին և ՈԱԱԿ-ի կողմից իրականացված ինստիտուցիոնալ ու ծրագրային հավատարմագրման փորձարկումներին:

- ՈԱԱԿ-ը հատուկ շնորհակալություն է հայտնում միջազգային փորձագետներին, ովքեր իրենց ներդնումներն ունեցան ՀԲ-ի և ՏԵՄՊՈՒՍի շրջանակներում իրականացվող ինստիտուցիանալ և ծրագրային հավատարմագրման փորձարկումներում, ինչպես նաև շարունակաբար իրենց օժանդակությունն են ցուցաբերում ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում որակի ներքին ապահովման համակարգի կայացման գործընթացում:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

s.karakhanyan@anqa.am

www.anqa.am